

խատութեան մէջ ուխտաւորներու կողմէն նուիրական մասունքներ փրցնել տանելու սովորութիւնը յիշելէ յետոյ, կ'աւելցնէ հետեւեալ խօսքերը. «այսպէս կը տեսնուի ժէ. դարուն հայոց պատրիարքը կը գանգատի որ Ս. Հեղինէի Աթոռէն՝ որու վրայ սովորութիւն ունէր նստելու, մասունք ստացող ուխտաւորներու կողմէն կտորներ փրցուած էին, և ան ստիպուած էր յաճախակի նորոգութիւններ կատարելու, պարագան ալ աւելի գժուարին էր, վասնզի ոչ թէ պատրիարքն էր որ կը նստէր նոյն աթոռին վրայ, այլ նոյն ինքն՝ Ս. Հեղինէն որ նստած էր անոր վրայ, և այդ պատճառաւ ան շատ յարզի էր (*)» (Kel. էջ 138):

3. — Եկեղեցիին սիւներուն արցունքը. — Ուղեգիր Ֆելիքս Փապրի 1484 ին հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին նկարագրելէ յետոյ կ'ըսէ թէ Քրիստոսի Չարչարանաց ժամանակ նոյն եկեղեցիին սիւներով շինուած էր այն դատարանը ուր տէրն մեր կը դատուէր և հոն բերուած էին Ս. Հեղինէէն: Այս սիւները ըսպիտակ են և յզկուած և շարունակաբար թաց, ջուրը կաթիլ կաթիլ կը վազէ. եւ երբ մէկը կը սրբէ այս:

(*) Հիմակ Ս. Հեղինէին Աթոռը գոյութիւն չունի, եւ չենք գիտեր թէ երբ վերցուած է, եւ այդ մասին ալ յիշատակարանի չենք հանդիպած, բայց սոյոգ կ'երեւի մեզ Kelman ի վերի յիշատակութիւնը, վասն զի զիս խաչի շարք երեկոյեան նախասօնակին՝ երբ միաբանութիւնը հանդիսիւ ասեան կ'ելնէ՝ նոյն միջոցին, կարգաւ շուրջաւազեա՞ն՝ Խաչգիւտի այլը նայող պատահանին մէջ դրուած Աւեսարանին համբուրմամբ՝ ուխ կը կատարէ. այս սովորութենէն կը հակոցուի թէ արդարեւ ի հնումն հոն կար Ս. Հիղինէին Աթոռը եւ անոր կը կատարուէր ուխ, ինչպէս մինչեւ այսօր ուխ կը կատարուի՝ Ս. Աւեսարանի համբուրմամբ՝ Ս. Յակոբայ Աթոռ ին Տեառնեղբոր սօնին, Ս. Յակոբեանց սանարին մէջ: